ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1071/02/25 ք. Երևան
14 Փետրվարի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/1071/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

Սուր և Նիզակ ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Հայցվոր)՝ ի դեմս ներկայացուցիչ Կարինե Սողոմոնյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող Օթևան ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատասխանող), երրորդ անձ՝ Պարեկ ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Երրորդ անձ)՝ հայցելով № ՕԹԵՎԱՆ-ԳՀԾՁԲ-25/1-1 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի բացման և գնահատման հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 21-ի № 3 շտկված արձանագրության 1.2 կետում զետեղված՝ Սուր և Նիզակ ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշումը ճանաչել ոչ իրավաչափ ու անվավեր:
Հայցվորը հայցադիմումին կից միջնորդություն է ներկայացրել դատարան հայցա-դիմումի ներկայացման վաղեմության ժամկետի երկօրյա խախտումը հարգելի համարելու և վերականգնելու մասին, համաձայն որի՝ № ՕԹԵՎԱՆ-

ԳՀԾՁԲ-25/1-1 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի բացման և գնահատման հանձնաժողովի 21.01.2025թ. № 3 շտկված արձանագրությունը հրապարակվել է 24.01.2025թ.: Վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը և 46-րդ հոդվածի 4-րդ մասը, հայտնել է, որ նշվածից հետևում է, որ ըստ նշված հոդվածների, 21.01.2025թ. կազմված և 24.01.2025թ. հրապարակված № 3 շտկված արձանագրությունը պետք է բողոքարկվեր 10 օրյա ժամկետում՝ առավելագույնը մինչև 04.02.2025թ. ներառյալ: Նշված 10 օրերի ընթացքում հնարավոր չի եղել ներկայացնելու սույն հայցադիմումը, քանի որ հայցի առարկան և փաստական հանգամանքները Դատարան ճգրտված ներկայացնելու համար անհրաժեշտություն է առաջացել ստուգելու էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ, քանի որ հայցի փաստական հիմքը ոչ միայն հայցվորի հայտը մերժելն է, այլև «Պարեկ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը բավարարելը: Հայցապահանջը ամբողջական լինելու համար անհրաժեշտություն է առաջացել Պատասխանողից պահանջելու «Պարեկ» ՍՊ ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ «Պարեկ» ՍՊ ընկերության հերթապահ մասի գտնվելու, ահազանգման և լոկացիոն համակարգով աշխատելու Cnord (կամ համարժեք), ինչպես նաև զենք և փամփուշտներ պահելու և օգտագործելու թույլտվության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր, քանի որ դրանք պատշաճ և բավարար լինելու դեպքում, հնրավոր է, որ սույն հայցադիմումը չներկայացվեր: Հիշյալ փաստաթղթերը Պատասխանողի կողմից Հայցվորին են ուղարկվել 7 օր անց՝ 31.01.2025թ.: Քանի որ ներկայացված փաստաթղթերում առկա չեն եղել «Պարեկ» ՍՊ ընկերության՝ ծառայողական զենք ունենալու և պահնորդներին ամրակցելու վերաբերյալ փաստաթղթեր, Հայցվորի կողմից անմիջապես՝ նույն օրը կրկնակի հարցում է կատարվել Պատասխանողին, խնդրելով եթե առկա են, ապա սեղմ ժամկետում ուղարկել նաև նշված փաստաթղթերը: Մինչ օրս Պատասխանողը չի պատասխանել Հայցվորի նշված՝ 31.01.2025թ. հարցմանը, ենթադրվում է միտումնավոր: Նշված փաստաթղթերը Դատարան ներկայացնելու նպատակով Պատասխանողից պահանջելը ինքնանպատակ չէ, նպատակ է հետապնդում Դատարանին ճիշտ կողմնորոշվելու և բացահայտելու, որ «Պարեկ» ՍՊ ընկերության հայտը ենթակա է եղել մերժման՝ ծառայողական զենք և փամփուշտներ չունենալու պատճառով ու ընդհակառակը՝ Հայցվորի հայտը եղել է բավարարման ենթակա: Նկատի ունենալով, որ հայցադիմում ներկայացնելու դատավարական ժամկետը երկու օրով բաց է թողնվել, ոչ թե՝ Հայցվորի անգործության, այլ Հայցվորի կողմից հայցի առարկան և փաստական հանգամանքները հիմնավորելու համար վերը նշված փաստը ստուգելու և պահանջվող փաստա-թղթերը ձեռք բերելու համար, ուստի միջնորդել է սույն հայցադիմումի ներկայացման վաղեմ-ության ժամկետի

երկօրյա խախտումը համարել հարգելի և վերականգնել:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող Օթևան ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Անդրադառնալով Հայցվորի միջնորդությանը հայցադիմումի ներկայացման վաղեմության ժամկետի երկօրյա խախտումը հարգելի համարելու և վերականգնելու մասին, Դատարանը գտնում է, որ այն առարկայազուրկ է և ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորմամբ՝
Հայցվորի կողմից վկայակոչված «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 46-րդ հոդվածով սահմանված ժամկետները հանդիսանում են հայցային վաղեմության ժամկետներ, որոնք իրենց հերթին իրավական նշանակություն ունեն ոչ թե հայցի ներկայացման, այլ հայցի բավարարման իրավունքի տեսանկյունից, այսինքն՝ անկախ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելը չի հանդիսանում դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի, որի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:
Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:
Հաշվի առնելով, որ դատավարության սույն փուլում բացակայում է հայցային վաղեմության կիրառման իրավահարաբերությունը, իսկ հայցվորի կողմից հայցի ներկայացման իրավունքի վրա հայցվորի կողմից նշված ժամկետները չեն ազդում, նշված միջնորդությունն անհիմն է և ենթակա է մեժման:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժել՝ հայցադիմում ներկա-յացնելու ժամկետի բացթողնման հիմքերի

բացակայության հիմքով և հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Օթևան ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանք-ների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափութ-յունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախա-տեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 17.03.2025 թվականին:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ

բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.02.14 10:46:34 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am